


ԱՀՀ  
2779

Խ Ս Հ Մ

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԺՈՂՈՎՐԴՅԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱԾ

Պրակտորադիր քայլը յերկիրմարի, միացե՛ք



«ՅԵՐԿՐՈՐԴ ՀՆԳԱՄՅԱԿԻ  
ՓԱԽԱՌՈՒԹՅՈՒՆ»

(Առաջին ՏԱՐՎԱ ԲԱԺԻՆ)

ՆՅՈՒԹԵՐ ԶԵԿՈՒՅՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ  
ԺՈՂՈՎՆԵՐՈՒՄ, ՔԱՆՈՐԵՐՈՒՄ ՑԵՎ ՄԱՍԱՎՅԱԿԱՆ  
ԲԱՑԱՐԱԿԱՆ ԱԾԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԱՐ ՔԱՂԱՔՈՒՄ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀՄԽՀ ՖԻՆԱՆՍԱՐԱԾԻ

ՅԵՐԵՎԱՆ

1933

ԱՌԱՋԻՆ ՀՆԴԱՄՑԱԿԸ ԿԱՌՈՒՑՎԱԾ Ե ԻՐ՝  
ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՀԱՇՎՈՎ

1. ԽՍՀՄ բանվոր դասակարգը կոմունիստական  
կուսակցության և նրա լենինյան կենտկոմի ղեկավա-  
րությամբ, գլխավորությամբ ընկ. Ստալինի հաղթա-  
կանորեն ավարտեց հնդամյալը 4 տարում։ Առաջին  
հնդամյալի վճռական հաջողությունները — արտա-  
հայտվեցին նրանում, վոր կառուցված ե սոցիալիստա-  
կան եկոնոմիկայի հիմնաքարու, ԽՍՀՄ հետամնաց ագ-  
րարային յերկրից վերածվեց առաջավոր ժամանակա-  
կից տեխնիկայով զինված հզոր ինդուստրիալ յերկրի,  
Դնեպրոգետմի, Մագնիսոստրոյի, Կուդինեցկստրոյի,  
Խոշոր ավտոտրակտորային, ածխային, մետալուրգիա-  
կան, մեքենաշինարարական արդյունաբերության քի-  
միական, այլում ինիվական հսկաների — կոմբինատների  
և այլնի յերկրի։

Սոցիալիստական ինդուստրացման և կոլեկտիվաց-  
ման լենինյան քաղաքականությունն ապահովեց կոր-  
խողային և սովորողային շինարարության հաղթանակը  
և դասակարգային թշնամու ու նրա գործակալներ աջ և  
«ձախ» ուղղությունիցմի ջախջախումը քաղաքում և գյու-  
ղում։ ԽՍՀՄ վերածվեց ամենալավ դյուզատնեսա-  
կան տեխնիկայով զինված աշխարհիս ամենախոշոր հո-  
ղագործական յերկրի, ամբողջ ժողովրդական տնտե-  
սության սոցիալիստական վերակառուցումն ավար-  
տելու համար ատեղծված և սեփական ինդուստրիալ  
բազա։ Զնդամյալի հանրապետություն մեր յերկիրը  
վերածվեց տեսական անկախ և պաշտպանումներու-  
թյան տեսակետից հզոր յերկրի։ Առաջին հնդամյալի  
հաղթական ամառնորմն արահովեց սոցիալիզմի լրիկ  
հաղթանակը ԽՍՀՄ-ում։

2779 - 249-1

2. Հնդամյա պրանի իրազոքումը պահանջեց հըսկայական դրամական միջոցներ ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերը Փինանսավորելու համար և հատկապես հնդամյա պրանի հիմնական ողակը — ծանր ինդուստրիան, նրա միջոցով մեջմանաշխարաբությունը:

Մանք ինդուստրիայի ամբողջ հնդամյա պրանի ֆինանսավորումն ապահովելու համար, Խորհրդային իշխանությունն ուներ մի ճանապարհ՝ զա շինարարությունն եր իր անփական պրոլետարական հաշվով, կուսակցությունը դիտեր, թե ինչ ճանապարհով և կառուցվել ծանր ինդուստրիան Անդիմայում, Գերմանիայում, Ամերիկայում։ Նա գիտեր, վոր այլ յերկրներում ծանր ինդուստրիան կառուցվել ե կամ խոշոր վորհասությունների ոգնությամբ, կամ այլ յերկրները թալանի յենթարկելու միջոցով, կամ թե և այս և այն ճանապարհներով միաժամանակ։

Կուսակցությունը դիտեր, վոր այլ ճանապարհները փակ են մեր յերկրի համար. ապա ինչ եր նա հաշվի առնում։

Նա հաշվի յեր առնում այն դրությունը, վոր ունենալով Խորհրդային իշխանություն և հենցելով հողի ազդայնացման, արդյունաբերության, տրանսպորտի, բանկերի, առեվտրի վրա, մենք կարող ենք անցկացնել խոշորագույն ռեժիմ նրա համար, վորակեսզի կուտակենք ծանր ինդուստրիայի վերականգնման և զարգացման համար անհրաժեշտ բավականաչափ միջոցներ։

Կուսակցությունն ուղղակի ասում եր, վոր այդ դործ կապահնջ լուրջ զոհեր և վոր մենք պիտի տանք այդ զոհերը բացահայտուն և դիտակցորեն, յեթե ուղամ ենք հասնել նպատակի։

Կուսակցությունը խնդիր եր զբեկ բարձրացնել արդործը մեր յերկրի ներքին ուժերով, առանց զբու ստրկական վարչերի և փոխառությունների (Ստալին)։

Անցկացնելով պետական միջոցների ծախսման մեջ խստագույն տնտեսում, ամեն կերպ ուղարկողծելով տնտեսության խորհրդային սխտեմայի հսկայական առաջներությունները և հենցելով բանվոր դաստակարդի գ

աճող վերելքի և ակտիվության, ծավալվող սացիալիստական մրցության և հարվածայնության վրա, մենք ձեռք բերեցնեք այն, վոր առաջին հնդամյակը 4 տարում կառուցված և մեփական սոցիալիստական կուտակումների հաջողության, մեր հնդամյակի Փինանսավորման գործում փոխառությունների և խնայողությունների միջոցով տանյակ միլիոնավոր աշխատավորության անմիջական մասնակցության հաջողին։

3. Առաջին հնդամյակի սոցիալիստական շինարարության ֆինանսավորումն արտահայտվեց 116 միլիարդ ռուբլի գումարով, ամբողջ հնդամյակի համար նախատեսված 86 միլիարդ ռուբլու փոխարեն։ Կուտակման հիմնական աղբյուրներն ենին։

1. Համայնացրված տնտեսության կուտակումները։

2. Հատկացումներ պետության ոգտին յերկրի աճող ապրանքաշրջանառության յեկամատի մասից։

3. Սպառնակության միջոցների մոբիլացիան, հատկապես խորհրդային պետության փոխառություններում աշխատավորության ակտիվ մասնակցության և աշխատանքային խնայողությունների ուղղությամբ (ավանդներ խնայողամարկելում)։

Հնդամյակի չորս տարվա ընթացքում, ընակչության միջոցների մոբիլացիայի պլանը կատարվել ե 21,6 միլիարդ ռուբլու գումարով (18,6 %, Փինանսավորման — 116 միլիարդ ռուբ. ընդհանուր գումարի նկատմամբ)։

Առաջին հնդամյակում (4 տարվա և 1930 թ. հատուկ յեռամայակի 3 ամսվա համար) ազգաբնակչության մեջ տեղակորված պետական փոխառությունների պլանը կատարվել ե 5,863,1 միլիոն ռուբլիվ, հընգամյա պլանով նախատեսված 3,116,5 միլիոն ռուբլու փոխարեն։

Առաջին հնդամյակում փոխառության պլանային առաջդրանքների, ինչպես և ազգաբնակչության միջոցների մորիլիզացիայի պլանի հաջող գերազանցումը ապահովվում եր բանվոր դաստակարդի, կոլտնտեսական

դյուզացիության և աշխատավորական լայն մասսաների յեկամուտների անընդհատ աճումով և խորհրդային իշխանության ֆինանսական միջոցառումների, նրանց ակտիվ աջակցությամբ:

Հնդամյակի 4 տարում ժողովրդական յեկամտի 24,8 միլ. ռուբլուց՝ 45 միլիարդ ռուբլուց ավելի աճելուն շուրջընթաց, բանվոր դասակարգի թիվն աճել է 2 անդուրընթաց, բանվոր դասակարգի թիվն աճել է 2 անդամ, 1928 թ. համեմատությամբ և զգալիորեն մեծացել և ժողովրդական յեկամտի մեջ բանվոր դասակարգի մասը:

Եերկրի հարստացման և ժողովրդական յեկամտից սոցիալիստական շինարարության ֆինանսավորման համար նշանակալից հատկացումների աճի հնարավորությունը ԽՍՀՄ աշխատավորության նյութական և կուլտուրական մակարդակի անընդհատ աճման հետ միաժամանակ վորոշվում են նրանով, վոր մեզ մոտ՝ «ժողովրդական յեկամտի բաշխումը կատարվում են, վոչ թե շահագործող դասակարգերին և նրանց բազմաթիվ պարագիտային սպասավորների հարստացման, այլ բանվորների և գյուղացիների նյութական դրության սիստեմատիկ բարձրացման և գյուղում և քաղաքում սոցիալիստական արդյունաբերության ընդլայնման շահերից յելնելով» (Ստալին):

4. Առաջին հնդամյակի (4 ¼ տարվա) ընթացքում միայն արդյունաբերության մեջ ընդուրկվել է 23 միլիարդ 300 միլիոն ռուբլի, այդ թվում ծանր արդյունաբերության («Ա» խմբի) մեջ ներդրավկել է 20,1 միլիարդ ռուբլի:

Ազգաբնակության միջոցների ներդրավումն այդ ժամանակի համար կազմում եր 21 միլիարդ ռուբլուց ավելի:

Այլպիսով լայն մասսաների մասնակցությամբ սոցիալիստական շինարարության մեջ իրենց միջոցներով և յեկամուտներով հայտնաբեր և ծանր արդյունաբերության մեջ հոկայական կապիտալ ներդրումների ընդհանուր գումարին: Առաջին հնդամյակում գյուղատնտեսության սոցիալիստական սեկտորի մեջ ներդրավկել է

15,700 միլիոն ռուբլի, դրանից 12,700 միլիոն ռուբլի ի հաշիվ պետության, այդ թվում 9,4 միլիարդ ռուբլի հիմնական ներդրումները՝ հնդամյա պլանով նախատեսնված 7,2 միլիարդ ռուբլու փոխարեն: Սոցկուլտուրական շինարարության համար (հիմնադրանոցներ, դպրոցներ, ակումբներ և այլն) մասհանված եր 25 միլիարդ ռուբլի հնդամյակի համար պլանով նախատեսնված 20,9 միլիարդ ռուբլու փոխարեն:

Հնդամյակի հանրագումարում մենք ձեռք մերեցինք այն, վոր մեզ մոտ ստեղծված եւ մե մետալուրիան — յերկրի ինդուստրացման հիմքը, տրակտորացին արդյունաբերությունը, ավտոմոբիլային արդյունաբերությունը, ժամանակակից քիմիական արդյունաբերությունը, ժամանակակից գյուղատնտեսական մեքենաշինարարությունը, ավտային արդյունաբերությունը, ստեղծված եւ աշխարհում ամենախոշոր ելեկտրական եներգիայի, նաևթային արտադրանքի և ածխի արտադրությունը, ստեղծված ենոր ածխամետալուրիական բազա արեելքում:

Մեր յերկրի հյուսիսում, տեղադրի արդյունաբերության միակ բազայի վոխարեն մոտ ժամանակներում կունենանք 2 նոր բազաներ Միջին Ասիայում և Արևմտյան Սիրիում:

«Յեւ մենք վոչ միայն ստեղծեցինք արդյունաբերության այդ նոր հսկայական ճյուղերը, այլև մենք նրանց ստեղծեցինք այն մասշտաբով և այնպիսի չափերով, վորոնց առաջ նաեւմանում են յեփրավական ինդուստրիայի մասշտաբները և չափերը» (Ստալին):

ԽՍՀՄ-ն հնդամյակի հանրագումարով գրավեց՝

Տրակտորների արտադրությամբ	1-ին տեղն աշխարհում
Գյուղատնտեսական ներքին արտադրությամբ	1-ին տեղն աշխարհում
Կոմբայնների արտադրությամբ	1-ին տեղն աշխարհում
Հնդանուր մեքենաշինարարությամբ	1-ին տեղը Յեվրոպայում
	և 2-րդ տեղն ամերիկում

Քոտ թուջի

Քոտ ելեկարո- եներգիայի

Քոտ նավթի

Քոտ տուֆի

Քոտ ածուխի

Քոտ քիմիայի

1-ի տեղը Յեփրոպայում  
և 2-րդ տեղն աշխարհում  
3-րդ տեղը աշխարհում  
1-ին տեղը Յեփրոպայում  
և 2-րդ տեղն աշխարհում  
1-ին տեղն աշխարհում  
4-րդ տեղն աշխարհում  
4-րդ տեղն աշխարհում

Գյուղատնտեսության բնադավառում 3 տարվա ընթացքում ստեղծված է 200 հազար կողմնականություններից ավելի, վորոնք ընդդրկում են գյուղական տնտեսությունների 60 %-ից ավելին, ընդդրկելով գյուղական ամբողջ տարածությունների 70 %-ից ավելին:

Ստեղծված է մոտ 5.000 խորհրդային տնտեսություն: Ներկայիս հացի տարեկան մթերումը 2 անգամից ավելի գերազանցում է այն ժամանակաշրջանի հացամթերման չափից, յերբ գյուղում գերակշռում երանատական գյուղական տնտեսությունը և կուլակային տնտեսությունը:

«Կուսակցությունը ձեռք բերեց այն, վոր կուլակությունը վորակեր գասակարգ ջախճախմեց, թեկող և չվերջացմեց, աշխատավոր գյուղացիությունը ազատված է կուլակային ճորտությունից և շահագործումից և Խորհրդային իշխանությունը ունի ամուր տնտեսական բաղադրյում, կուլակայի տնտեսության բազմն:

«Կուսակցությունը ձեռք բերեց այն, վոր ԽՍՀՄ-ի կուսակցությունը մանր գյուղացիական տնտեսության վերափոխմած և մանր գյուղացիական տնտեսության յերկրից, աշխարհում ամենափոշոր գյուղատնտեսական յերկրի» (Ստալին):

Ժողովրդական տնտեսության բոլոր բնադավառներում իշխում է սոցիալիզմի սկզբունքը և այնտեղից արտաքիած են կապիտալիստական ելեմենտները: Համաշխարհային պատմական նշանակություն ունեցող տուածին հնդկացիակը կառուցված է ի հաշիվ բանվոր-

ների և կոլտնտեսականների միլիոնավոր մասսաների մեծագույն հերոսության, անձնագոհության և կառավարության գլխավոր գծի անձնավորության, ի հաշիվ բանվոր դասակարգի առաջավոր մասի հարվածայնության և ենտուղիազմի, ի հաշիվ աշխատավոր մասսաների պրոլետարական պետության առաջին հնդկացիան վրանների աեփական Փինանսավորման, ի հաշիվ սեփական սոցիալիստական կուտակումների, իրենց սեփական պրոլետարական հաշվով:

## 2

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ ԿՈՐԾԱՆԵՑ  
ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՅԵՐԿՐՆԵՐԻ ՖԻՆԱՆՍՆԵՐԸ,  
ԿԱՏԱՍՏՐՈՒԹԻԿ ԿԵՐՊՈՎ ՎԱՏԹԱՐԱՅՐԵՑ ԱՇԽԱՏԱ-  
ՎՈՐՈՒԹՅԱՆ ՆՑՈՒԹԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

5. Այն ժամանակ, յերբ ԽՍՀՄ առաջին հնդկացիակի ժամանակաշրջանում հակայական քայլերով գնում եր նոր սոցիալիստական շինարարության վերելքը և ծավալած շինարարության արագությունը, ծնվում եին նոր կառուցումների հերոսները և հարվածայինները, գործադրիկությունն իսպառ վերացված եր, արդյունաբերությունն անցել եր 7-ժամ յա բանվորական բրիգադական վերաբերություններում, ինչպես ՀՍՄՆ, Անդրյայում, Գերմանիայում և այլն, գնում եր արտադրության անընդհատ անկում, վորը 1932 թ. հասավ՝

Արդյունաբերության բնադավառում ՀՍՄՆ—1925 թ. համեմատությամբ 56 %-ի, Անդրյայում—մինչ 80 %-ի, Գերմանիայում—մինչ 55 %-ի, Լեհաստանում—մինչ 52 %-ի:

Գյուղատնտեսության բնադավառում: Հիմնական հաց արտադրող կապիտալիզմի յերկրներում ցանքային տարածությունները կրծատվել են 8—10 %-ով, ՀՍՄՆ բաճբակի ցանքի տարածությունը կրծատվել ե 15 %-ով, շաքարի ճակարեղը Գերմանիայում և Զեխո-

Արդակիայում — 22—30 % -ով, կտավհատ կիտվայում և կատվիայում 25—30 % -ով:

Գործազրկության կատաստրոֆիկ աճումը ՀԱՄՆ-ում, ըստ պաշտոնական տվյալների 1932 թ. վերջում հասել եր 12 միլիոն մարդու, Անդրկայում, նույնպես ըստ պաշտոնական տվյալների (վորոնք սովորաբար փոքրացվում են բոլոր կապիտալիստական յերկրներում), գործազրկության քանակը 1928 թվին աճել է 1.290 հազարից մինչ 2.8 միլիոն մարդ. 1932 թ., գեր մանիայում գործազրկության աճումն է 1928 թ. 1.376 հազարից մինչ 6.5 միլիոն, 1932 թ. մինչ 9 միլիոնի ներկա տարում, ֆաշիստական ռեժիմի ժամանակ. զբաղված բանվորների ամբողջ թվի համեմատությամբ գործադրությանը 0% -ը կազմում է՝ Անդրկայում — 23 %, Գերմանիայում — 33 %, ՀԱՄՆ — 34 % կամ այլ խոսքով ասած յուրաքանչյուր 3—4 աշխատողին ընկ-նում և մեկ գործազրուրկ:

Բացահայտ գործացված տվյալների համաձայն, մի շարք կապիտալիստական յերկրներում գործազրկության թիվը գերազանցել է 30 միլիոնից:

Միաժամանակ կատարվում է բանվորների աշխատավարձի սխտեմատիկ իշեցում, վորը 1932 թ. միայն գերմանիայում հասել է 50 % -ի 1928 թ. համեմատությամբ: 1929 թ. համեմատությամբ ՀԱՄՆ աշխատավարձի ֆոնդի կրճատումը կազմում է 47 %:

Բանվորների ապահովագրման Փոնդի կրճատումը կամ լրիվ բացակայությունը ել ավելի յէ ուժեղացնում աղքատությունը և անապատանությունը:

Կապիտալիստական յերկրներում լավ չի նաև աշխատող բանվորի գրությունը: Նրա աշխատավարձը կրճատված է, ել ավելի յէ ուժեղացնում շահագործումը, չկա վոչ մի համոզվածություն վաղվա որվան համար, բոլորովին հակառակն է ԽՍՀՄ-ի բանվորների գրությունը:

«Արտասահմանում բանվորը ճնշված է կապիտա-լիզմից, նա չդիտե ինչ և սպասում նրան վաղը,

կարող է պատահել, վոր նրան վաղը հեռացնեն, նրա կինը և յերեխաները կիման սովործ:

Իսկ մեզ մոտ բանվորը շատ բան ունի՝ նրա յերեխաները պլոներական ջոկատումն են, նրա կինն աշխատում է, ինքը կարող է գնալ ակումբ, սովորել, հանգստանալ: Մի քանի ընտանիքներում, ուր առաջ աշխատում եր մի մարդ, այժմ աշխատում է յերկուսը, յերեքը:

Յուրաքանչյուր բանվոր որյեկտիվորեն զգում է իրեն նյութական դրության բարելավումը (Լ. Կադանովիչ): Սովոր, աղքատությունը և ավերումը վորակու գյուղատնտեսական ճգնաժամի հետեւանքը ընդգրկել են կապիտալիստական յերկրների գյուղատնտեսական աշխատավորական մասսաները: Բոլոր յերկրների կապիտալիստները ճգնաժամից յէլք են վնասում բանվորական դասակարգի ել այնուից շահագործման մեջ, կապիտալիստների բանակում սպառազինման համար կատաղի պայքարի, դեռ չեղած ըստ չափերի և սարսափների նոր իմպերիալիստական պատերազմի տենդային նախապատրաստման, առաջին հերթին ԽՍՀՄ դեմ պատերազմի մեջ:

Չնայած կապիտալիստական յերկրների աշխատավոր բնակչության յեկամուտների խիստ անկման և այդ յերկրների բյուջեներում դեֆիցիտների զգալի ավելացման (ամերիկական բյուջեյի դեֆիցիտը կազմում է 1930—31 թ. 903 միլիոն դոլար, 1931—32 թ. — 2,885 միլիոն դոլար, Փրանսիական բյուջեյի դեֆիցիտը 1930—31 թ. կազմում է 3,2 միլիարդ Փրանկ, 1931—32 թ. — 5,6 միլիարդ Փրանկ) բյուջեներից և պետական վոլուսություններից հսկայական դումարներ և ախսավում են զրահանագերի, ավիացիայի, հեռուն հարվածող թնդանոթների ու մահացու զենքերի այլ տեսակի ձեերի վրա: Մի շարք յերկրներում (Լեհաստան, Ֆրանսիա և այլն) ուղղմական նպատակների համար ծախսերը համուռամ են ամբողջ բյուջեյի մոտ 2/3-ին:

Կապիտալիստական պետությունների բանվոր դա-

սակարգը, աշխատավոր գյուղացիությունն ատելու թյամբ են վնրաժերվում դեպի կապիտալիզմը։ Կապիտալիստների կողմից անցկացվող փոխառությունները չեն հանդիսանում աշխատավորության լայն մասսաների աջակցության։

Գերմանական Փաշլիզմը Հիտլերի գլխավորությամբ ծծում և Գերմանիայի աշխատավորության վերջին յեկամուտները նրա համար, վորպեսդի սպառազինի Փաշիստներին բանվորների դեմ և ցույց տա Փինանսական ողնություն սնանկացած խոշոր կարգածատերերին, բանկիրներին և արդյունաբերողներին։ Միայն քիչ ժամանակ առաջ, արեվելյան Պրուսիայի ամենախոշոր կարգածատերերը ստացան գերմանական կառավարությունից 1 միլիարդ ռուբլուց ավելի ոուբսիդա, այն ժամանակ, յերբ Արևելյան Պրուսիայի գյուղացիական տնտեսությունը հանվում եր աճուրդի պարտքի դիմաց։

ՀԱՄՆԻ, Ֆրանսիայի, Անգլիայի և այլ կառավարությունները խոշոր Փինանսական ողնություն են ցույց տալիս մնանկացած բանկիրներին, խոշոր Գերմերներին և արդյունաբերողներին։ Նույն ժամանակում այդ յերկրներում տիրում ե սովոր, աղքատությունը, անապատանությունը և մանկական մահացությունը բանվորների և գյուղացիների մեջ։

ԽՍՀՄ աշխատավորության սեփական աշխատանքով, առանց դրսի ողնության և ճորտության ձեռքբերված մեր Հնդամյակի հաջողությունները, ամրացնելով մեր յերկրի աշխատավոր մասսայի նյութական դրությունը, ներշնչում են նրանց մեջ կայտառություն և վստահություն վաղվա որվա համար, ստեղծում են յերկրորդ Հնդամյակում անդամակարդ սոցիալիստական հասարակություն լրիվ կառուցման բոլոր պայմանները։

«Հնդամյակի հաջողությունները մորթիլիզացիայի յեն յենթարկում բոլոր յերկրների բանվոր դասակարգի հեղափոխական ուժերը՝ ընդդեմ կապիտալիզմի» (Ստալին)։

## 3

Ո՞ԻՐ ԵՆ ԳՆԱՅԻՆ ԽՍՀՄ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՍՏԱՑԱՎԱԾ ՄԻԶՈՑՆԵՐԸ

6. Հնդամյակի 4 տարբում ԽՍՀՄ աշխատավորության տասնյակ միլիոնները՝ տվեցին պետությանը փոխարինաբար 5 միլիարդ 863 միլ. ռուբլուց ավելի (1928—29 թ. 575,7 միլիոն ռուբլի, 1929—30 թ. և հատուկ յեռամոյակում՝ 1072,5 միլիոն ռուբլի, 1931 թ.—1746,1 միլիոն ռուբլի և 1932 թվին—2468,8 միլիոն ռուբլի)։

Առաջին հնդամյակի փոխառություններից առաջված միջոցներով կառուցված են հարյուրավոր նոր գործարաններ, Փարբիկաներ, ՄՏ-կայաններ, խորհանուելություններ, բանվորական ակումբներ, հազարավոր նոր տներ բանվորների համար և այլն։

Տարեց-տարի աճել և պարտատոմատերերի թիվը և իրենց աշխատավոր մասսաների պահանջով պետության կողմից բաց թողնված փոխառությունների գումարը

ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Պարտատոմա- տակարգերի թիվը	Բրազման ուստեղերի (միլ. ռուբլի)
Ինդուստրացման 1-ին փոխառ.	6 միլիոն	200
» 2-րդ »	8 »	507
» 3-րդ »	10 »	828
Հնդամյակը չորս տարում	12 »	1072
Հնդամյակի 3-րդ վճարել. տարի	33 »	2030
Հնդամյակի 4-րդ ավտոմ. տարի	40 »	2710

Ազգաբնակչության առանձին խմբերի մասնակցությունը մեր մասսայական այդ փոխառություններում բնորոշվում է հետևյալ թվերով (միլ. ռուբլի)։

	ՀՆԳԱՋՄԱՆ ՀՐԱՄԱԿԱՆ ՏԱՐԱԾՈՒՅԹ					
	ՀՆԳԱՋՄԱՆ ՀՐԱՄԱԿԱՆ ՏԱՐԱԾՈՒՅԹ			ՀՆԳԱՋՄԱՆ ՀՐԱՄԱԿԱՆ ՏԱՐԱԾՈՒՅԹ		
	1-րդ մունիցիալ գոտի	2-րդ մունիցիալ գոտի	3-րդ մունիցիալ գոտի	4-րդ մունիցիալ գոտի	5-րդ մունիցիալ գոտի	6-րդ մունիցիալ գոտի
Բանվորներ և ժառայողներ . . .	113	415	590	725	1448	1920
Գյուղացիներ . . .	10	45	181	287	470	660
Այլ բնակչություն	77	47	57	60	112	180
Ընդամենը	200	507	823	1072	2030	2710

Բացի գրանից, մեր սոցիալիստական պլաններ ֆինանսավորման մեջ աշխատավորները մասնակցում են իրենց խնայողություններով (ավանդներ ինսայգարարկներում) :

40 միլիոն պարտատոմսատերերից, 30 միլիոն ավարդատուններ— այսպես և աշխատավորության ողնությունը խորհրդացնելու կառավարության Փինանսական միջոցառությունից :

Դ. Խորհրդային կառավարության փոխառություններն անբաժան են սոցիալիստական շինարարության ընդհանուր խնդիրներից : Մեր փոխառություններն ամբողջությամբ դնացել են նոր հսկաների շինարարության համար, արդյունաբերության, գյուղատնտեսության, կուլտուրական շինարարության բնադրականությամբ հնդուստրացման և հնդամյալի 4 տարում՝ պայքարի ժամանակական ըրջանի ընթացքում, յուրաքանչյուր բաց թողնված փոխառություն արդարացնում է կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ բանվորական դասակարգի պայքարի հերոսական ետապները, ԽՍՀՄ-ում սոցիալիզմի հաղթանակի համար ընդդեմ իմ պերիալիստական գիշատիչների և յերկրի ներսում

նրանց գործակալների վոտնձգությունների, ԽՍՀՄ-ում խաղաղ աշխատանքի համար :

ԽՍՀՄ ժողովրդական տնտեսության ինդուստրացման 1-ին փոխառությունը բաց ե թողնվել կառավարության կողմէից 1927 թվին բարձահաջողար բանվորական ժողովրդների առաջարկությամբ ի պատասխան անդրիական բուրժուակաման Պինանսական բոկչադային : Անդրիական պնդաճակատները հույս ունեցին, վոր ինդուստրացման քաղաքականությունը կկասեցվի, յեթե նրանք վերջ տան բոլոր տեսակի տնտեսական և ֆինանսական հարաբերություններին ԽՍՀՄ-ի հետ ինդուստրացման 1-ին փոխառությունը միլիոնավոր աշխատավորության պատասխանն եր անդրիական կապիտալիստների պրովակացիային և ցույց տվեց ԽՍՀՄ ժողովրդների անխախտելի միասնությունը ԽՍՀՄ տնտեսական անկախության և սոցիալիստական շինարարության պայքարի համար :

Ինդուստրացման 2-րդ փոխառությունը բաց ե թողնվել ԽՍՀՄ կառավարության կողմէից 1928 թ. բանվորների և աշխատավոր գյուղացիության պահանջով, ի պատասխան շախտայի մնանաբարության, վոր պատրաստում եր մեր Միության տնտեսական հղորության ջատումը և իմպերիալիստների պատերազմը ԽՍՀՄ իության դեմ :

Ինդուստրացման 3-րդ փոխառությունը — 1929 թվին : Իմպերիալիստները պրովակացիայի յենթարկեցին կոնֆլիկտը Հեռավոր Արևելքում ԽՍՀՄ-ի հետ : Ամբողջ յերկրով անցավ հուզմունքի և բողոքի հոսանքը մնդեմ իմպերիալիստների պրովակացիայի : Ի պատասխան այդ պրովակացիաներին բանվորների բազմազար ժողովները պահանջներ եյին դնում, սոցիալիստական ինդուստրացման փոխառության բաց թողման մասին :

«Հնդամյակը 4 տարում» փոխառությունը բաց ե թողնվել 1930 թ. Մոսկվայի և Լենինգրադի բանվորների նախաձեռնությամբ, Հնդամյա պլանը չորս տարում հաջող ավարտելու համար :

«Հնդամյակի Յ-րդ վճռական տարի» փոխառությունը բաց ե թողարկել 1931 թ. ելեքտրոդուրարանի (Մոսկվա) և այլ ձեռնարկությունների բանվորների նախաձեռնությամբ, համաշխարհային—պատմական խնդրի՝ մեր յերկրի առջիալիստական Եվրանոմիկայի հիմքի հասուցման ավարտումը հաջող լուծելու նպատակով։

«Հնդամյակի Յ-րդ, վճռական տարի» փոխառությունը բաց ե թողարկել 1932 թ. Ստալինի անվան (նախկին Սմօ) ավտոդորժարանի և այլ ձեռնարկությունների բանվորների նախաձեռնությամբ, հնդամյակի 4 տարրամ հաջող ավարտելու նպատակով։

ԽՍՀՄ-ի փոխառությունների անբաժանելի կապը մեր յերկրի տնտեսական խնդիրների հետ, լրիվ ոժանդակությունը և մստահություններ գեղի մեր փոխառություններին, ԽՍՀՄ աշխատավորության կողմից—արդիշխին և խորհրդային փոխառությունների յուրահատկությունը։ Մեր յերկրի աշխատավորությունը նշանակալից ողուաներ և ստանում փոխառություններից։ Հնդամյակի չորս տարվա ընթացքում պետության կողմից վճարված և աշխատավորությանը փոխառություններով տոկոսների և շահումների ձեռվ 841,9 միլիոն ռուբլի։

«Պարտատոմատիրոջ որ»-ի անցկացման կապակցությամբ առ 1—4—1933 թ. վճարվել է 2.100.000 շահումներ և ընդունկած և ստուգման մեջ մտու 17 միլիոն պարտատոմատերեր։

Այդպիսով ստուգումը պարզել է, վոր մոտավորապես յուզաքանչյուր 8-րդ պարտատոմատերը շահել է փոխառությունների պարտատոմմերի վորոշ գումար։

«Պարտատոմատիրոջ որ»-ը պարզել է յերկու կարևորագույն արդյունքներ։

1-ին արդյունքը։ Շահումների ստուգմամբ ընդուրիկած միլիոնավոր բանվորներ, կուտնտեսականներ և աշխատավորներ ցուցաբերեցին խոշոր հետաքրքրություն դեպի այդ կամպանիան։ «Այժմ ինձ կարիք չկա աղիտացիայի յենթարկել փոխառության համար, չկա

յես սիրով կբաժանութագրվեմ, վորովհետեւ տեսնում եմ ինչի համար են ծախսվում մեր փոխառությունները և ինչ ոգուտ են բերում անձամբ աշխատավորներին», բանվորուհու այդ տիպիկ հայտաբարությունը քավականաչափ բնորոշում և աշխատավորության լայն մասաների դրական վերաբերմունքը դեպի մեր փոխառությունները։ 2-րդ արդյունքը։ Կայանում ե նրանում, վոր մենք պետք ե պահանջնենք մեր ինայդրամարկղներից ամելի հստակ, ուշադիր և ամենորյա աշխատանք պարտատոմատերերի սպասարկման, շահումների ոտուգման, պարտատոմմերի ժամանակին բաժանման, տեղեկատու աշխատանքի կարգակիցման և այլնի դրծում։

#### 4

«ՑԵՐԿՈՐԴ ՀՆԴԱՄՑԱԿԻ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆԸ»  
(Առաջին տարվա բաժին)

8. «Ի տարբերություն առաջին Հնդամյակի, յերկրորդ Հնդամյակը լինելու յե առավելապես արդյունաբերության նոր ձեռնարկությունների յուրացման հընդամյակ, գյուղատնտեսության մեջ նոր ձեռնարկությունների, կոլտնտեսությունների կագմակերպչութեն ամբացման Հնդամյակ, վորն, իշարկե, չի բաշասում, այլ յենթագրում ե նոր շինարարության հետազ զարգացում, դա նշանակում է, վոր յերկորդ Հնդամյակը, յեթե նա ցանկանում է լուրջ հաջողություններ ունենալ, պետք ե լրացնել նոր շինարարության ներկայիս լոգունդը, նոր ձեռնարկությունների և նոր տեխնիկայի յուրացման նոր լոգունդներով» (Համկ(ր)կ Կկ-ի և ԿՎՀ-ի միացյալ պլենումի բանաձեկից «Առաջին Հնդամյակի արդյունքները» և 1933 թ.—յերկրորդ Հնդամյակի առաջին ավարված ժող. տնտ. պլանը)։

Նոր շինարարության լոգունդի իրականացման հետ

միասնեղ, նոր ճեռնարկությունների և նոր տեխնիկայի յուրացման խնդիրները պահանջում են բանվորներից, հարվածայիններից և հարվածայիններից մաքսիմալ պայքար՝ աշխատանքի արտադրողականության հետագա բարձրացման, արտադրանքի վորակի լավացման և ինքնարժեքի իջեցման համար։ Այդ խնդիրների իրականացումը կապահովի հաջող պայքարը կուտակման պարբուրների հետագա ծավալման, «Հնդամյակի 2-րդ կիոնի ինչպես շինարարության բնագավառում, այնպես և արդյունաբերական արտադրանքի աճման բնագավառում, նոր հզոր առաջընթացի» ապահովման համար (Ստալին)։

9. 1933թ. 2-րդ հնդամյակի առաջին տարին հանդիսանում է ԽՍՀՄ ժողովրդական տնտեսության հետագա դարձացման տարին։ Այդ տարում արդյունաբերության բնագավառում մենք կսայքարենք՝

1933թ. համաձիւթենական արդյունաբերության արտադրանքի 16,50% աճի ամբողջ ժողովրդական տնտեսության 18 միլիոնդում կապիտալ շինարարության ծրագրի կատարման։

9 միլիոն տոնն թուջի ձուլման

8,9 միլիոն տոնն պողպատի ձուլման

6,2 միլիոն տոնն պրոկատի ձուլման

15 նոր հնոցների, 51 մարտենների, 15 պրոկատնի ստանների և 4 բլյումինդների դործի ցցելու

16.300 միլիոն կիլովատ ժամ ելեկտրոներդիա արտադրելու

84 միլիոն տոնն ածուխ ստանալու

6,5 միլիարդ ոռուբլու մեքենաներ արտադրելու

1.839 միլիոն ոռուբլու քիմիական արտադրանք բաց թողնելու

8,8 միլիարդ ոռուբլու թեթև արդյունաբերության արտադրանք բաց թողնելու

7,7 միլիարդ ոռուբլու մննդային արդյունաբերության արտադրանք բաց թողնելու

2,072 միլիոն ոռուբլու անտառային արդյունաբերության արտադրանք բաց թողնելու

7,920 միլիոն ոռուբլու արդկոռուպերացիայի արտադրանք բաց թողնելու։

Յերկաթզծի տրանսպորտի միա յուրաքանչյուր որ 58.000 վագոն բեռնելու։

Արդյունաբերության մեջ աշխատանքի արտադրողականությունը 14% բարձրացնելու, արդյունաբերական արտադրանքը ինքնարժեքը 3,9% իջեցնելու։

Շինարարության ինքնարժեքը 50% իջնելու, ամբողջ ժողովրդական տնտեսության մեջ 6,8% և արդյունաբերության մեջ 9% աշխատավարձի ավելացում անցկացնելու, 11,7 միլիարդ ոռուբլու կոլտնտեսական շինարարության ծրագրելու կատարելու, պիտական բյուջեյի մուտքի մասը՝ 34,689 միլիոն ոռուբլի և յելքի մասը՝ 33.169 միլիոն ոռուբլի կատարելու համար։

Շինարարության այդ ծրագրի ապահովումը, պահանջում է պայքարի ծավալում կուտակման պլանների կատարման համար, առաջին հերթին կուտակման ամենակարևոր արդյունաբերության ներսում, վորը հաջողվում է ամենօրյա պայքարի միջոցով բանվորների և բանվորուհիների սոցմրցման և հարվածայնության հիման վրա, արտադրանքի վորակի լավացման, ինքնարժեքի իջեցման և աշխատանքի արտադրողականության առաջադրանքների կատարման համար։

2-րդ հնդամյակի առաջին տարում կոմունիստական կուսակցության կողմից գյուղատնտեսության բնագավառում, առաջադրված են կարեռագույն ինդիքներ։

1933թ. մենք պայքարում ենք ցանքային տարածության ապահովման համար։

Գարնանային կուլտառուրաներ . . . . 97 միլիոն հեկտար Աշնանային կուլտառաներ . . . . 38,5 միլիոն հեկտար։

Բերքատվության բարձրացման համար՝ Հստ հացահատիկային կուլտուրաների . . . . 13 առկ.

Բամբակի	8 տոկ.
Կտվահատի	20 >
Արևածաղկի	25 >
Շաքարի հանդեղի	33 >

ՄՏ կայանների թիվը 2.768-ի հասցնելու համար, ինդուստրիալ կենտրոնների և արդյունաբերության պարենային և հովանոյթի բազայի ամրացման համար:

Գյուղատնտեսության հետագա վերելքի և կոլտընտեսությունների և առանձին կոլտնտեսականների յեկամտի անընդհատ աճի համար:

Մեր պլանների լրիվ Փինանսավորման համար, պայքարի ամենազորեղ գործիքներից մեկը, հանդիսանում են մեր մասսայական պրոլետարական փոխառությունները:

«Յերկրորդ հնդամյակի» (առաջին տարվա բաժին) փոխառությունն ուղղված է 2-րդ հնդամյակի 1-ին տարվա պլանների ապահովման, փոխառությունների հաջող բաժանորդացրությամբ ապահովվեց 2-րդ Հընդամյակի կարևորագույն խնդիրները՝ անդամակարգ սոցիալիստական հասարակարգի կառուցումը:

10. «Յերկրորդ հնդամյակի փոխառությունը» բաց է թողնվել յերեք միլիարդ ռուբլու չափով, 10 տարի ժամանակով, սկսած 1933 թ. հոկտեմբերի 1-ից, մինչև 1943 թվի հոկտեմբերի մեկը:

Փոխառությունը բաղկացած է յերկու մասից՝ տոկոսաբեր (անշահող) և անպայման չահող:

Փոխառության պարտատոմսերը բաց են թողնվել յուրաքանչյուրը հարյուր ռուբլու արժողությամբ: Բացի 100 ռուբլուց ամբողջական պարտատոմսերից, բաց են թողնվել նաև 50, 25, 10 և 5 ռուբլիանոց պարտատոմսեր, վորոնք հանդիսանում են ամբողջիկան պարտատոմսերի մասերը: Էստ տոկոսաբեր մասի, ամբողջական պարտատոմսերն ունեն միայն 25 և 10 ռուբլիանոց պարտատոմսեր: Հինգ ռուբլիանոց պարտատոմսերը բաց են թողնվել մանրացման գործածությունների համար: Փոխառության յուրաքանչյուր

մասը (տոկոսաբեր և անպայման չահող) բաժանվում են կարգերի, յուրաքանչյուր 100 միլիոն ռուբլու: Անպայման չահող յուրաքանչյուր կարգն ունի 20 հազար սերիաներ, յուրաքանչյուր սերիայում 50 հատ 100 ռուբլիանոց պարտատոմսերով: Տոկոսաբեր մասի յուրաքանչյուր կարգում 100 հազար սերիաներ՝ յուրաքանչյուր սերիայում 10 հատ 100 ռուբլիանոց պարտատոմսերով:

Անպայման չահող պարտատոմսերով՝ յեկամուտները վճարվում են միայն շահումների միջոցով: 10 տարվա ընթացքում, յուրաքանչյուր պարտատոմս անպայման շահում է: Շահումները՝ 100 ռուբլիանոց պարտատոմսերով՝ սհմանված են՝ 3000, 1000, 500, 250 200 և 150 ռուբլի, ներառյալ այդ թվում շահող պարտատոմսերի արժեքը (100 ռուբլի): Պարտատոմսի բաժանված յուրաքանչյուր մասով վճարվում է շահման գումարի համապատասխան մասը:

Որինակ՝ 50 ռուբլիանոց պարտատոմսով, վճարվում է 100 ռուբլիանոց պարտատոմսին համանելիք շահման գումարի կեսը և այլն:

Այսպիսով ի տարբերություն «Հնդամյակի 4-րդ ավարտական տարվա» փոխառության, նոր փոխառության պարտատոմսերը մարգում են շահման գումարի վճարման հետ միաժամանակ: 10 տարվա ընթացքում տեղի յեն ունենալու 40 շահումների վիճակահանություններ, յուրաքանչյուր տարում չորս վիճակահանություններով:

Վիճակահանություններն սկսվելու յեն 1934 թվին, այսինքն կոլեկտիվ բաժնեգրության մասմաս վճարման կարգով ձեռք բերվող պարտատոմսերի արժեքը բաժանորդների կողմից լրիվ մուծելուց հետո: Պետության կողմից փոխարինաբար ստացված անտոկոսաբեր մասի յուրաքանչյուր 100 միլիոն ռուբլու համար 10 տարվա ընթացքում պարտատոմսերով պիտի վճարվի 198 միլիոն ռուբլի: Փոխառության շրջանառության առաջին յերկու տարիներում մեկ միլիոն պարտատոմսէ

ըից, յուրաքանչյուր տարի շահում են 31.200 պարտա-  
տոմսեր :

Անպայման շահող մասի պարտատոմսերով շա-  
հումները վճարվում են խնայթբամարկղների կողմից  
պաշտոնական աղյուսակներով, վորոնք հրապարակ-  
վում են «Խղլեստիա», «Եկոնոմիչեսկայա Ժիդն»,  
«Կրեստյանսկայա Գաղետա» թերթերում և այն գործ-  
կոմի թերթում, վորի տերիտորիայի վրա կատարվել ե  
վիճակահանությունը: Խնայթբամարկղները շահում-  
ները վճարում են վերոհիշյալ թերթերից մեկն ու մեկի  
հաջորդ համարն ստանալուց հետո, սկսած այն համա-  
րից, վորում տպագրվել ե շահման աղյուսակը: 3000  
ռուբլու շահումները վճարվում են միայն Պետնիշի կող-  
մից շահող պարտատոմսերի իսկությունը նախորդ  
սոուղելուց հետո :

Շահած պարտատոմսը հետագա շահման վիճակա-  
հանություններին չի մասնակցում այնքան, վորքան  
շահած պարտատոմսով վճարվող գումարի մեջ մտնում  
ե նույնպես և պարտատոմսի արժեքը, այս շահումը  
վճարելիս պարտատոմսը չի վերադարձվում պարտ-  
ատոմսատիրոջը, այն մնում ե խնայթբամարկղում:

Տոկոսաբեր մասի պարտատոմսերի կուպոնները  
վճարվում են նրանց վճարման ժամկետը հասնելու ժա-  
մանակ, բոլոր խնայթբամարկղների կողմից: Պարտա-  
տոմսատերերը կարող են շահումներն ու կուպոնների  
արժեքն ստանալ իրենց ցանկացած ժամանակը, սկսած  
վճարման որից, բայց վոչ ուշ 1948 թվի հոկտեմբերի  
մեկից:

«Յերկրորդ հնդամյակի փոխառության» պարտա-  
տոմսերի վրա դրվում ե հասարակական հսկողու-  
թյան գործողությունը, վորը սահմանված ե «Հըն-  
գամյակը չորս տարում» փոխառության բոլոր բաժին-  
ների պարտատոմսերի վաճառքի և գրավ դնելու վերա-  
բերյալ:

Անպայման շահող մասի բոլոր պարտատոմսերը  
մարվում են նրանց վրա ընկած շահումները վճարելիս,

վորի դումարի մեջ մտնում ե, ինչպես վերևում ասվեց  
պարտատոմսի արժեքը:

11. Տոկոսաբեր մասի ամբողջ յեկամուտը՝ տրվում  
ե տարեկան տաս տոկոսի չափով, վորը վճարվում է  
կուպոններով: Կուպոնների վճարումը կատարվում է  
տարեկան մեկ անգամ հոկտեմբերի 1-ին, սկսած 1934  
թվի հոկտեմբերի 1-ից:

100 ռուբլիանոց պարտատոմի կուպոնված վճար-  
վում ե 10 ռուբլի, պարտատոմսի բաժանված յուրա-  
քանչյուր մասով վճարվում է կուպոնային յեկամու-  
թամապատասխան մասը (25 ռուբլիանոց պարտատոմսի  
կուպոնվ 2—50 կոպ. և այլն):

Տոկոսաբեր մասի պարտատոմսերով շահումների  
վիճակահանություններ չեն կայանալու:

Տոկոսաբեր մասի պարտատոմսերի մարումն սկս-  
վում է 1939 թվի հոկտեմբերի մեկից, թե վոր պարտա-  
տոմսերն են հատկապես յենթակա մարման, կվորոշվեն  
մարման վիճակահանությունների միջոցով: Մարման  
վիճակահանություններում դուրս յեկամ պարտատոմ-  
սատիրոջը վճարվում է նրա արժեքը, այն թվի հոկ-  
տեմբերի մեկից, վորում կատարվել ե վիճակահանու-  
թյունը: Այն ժամկետից սկսած յերբ պարտատոմսը  
դուրս ե յեկել մարման վիճակահանություննում, դա-  
դարեցվում է այլևս տոկոսների բարդումը նրա վրա:

Պարտատոմսատերերը կարող են տոկոսաբեր մա-  
սի պարտատոմսերը ներկայացնել նրանց արժեքն ստա-  
նալու համար, իրենց ցանկացած ժամանակը, սկսած  
նշված ժամկետից, բայց վոչ ուշ 1948 թվի հոկտեմբե-  
րի մեկից:

Աշխատավորները պարտատոմսերը ձեռք են բե-  
րում կոլեկտիվ բաժնեգրության կամ կանխիկ վճար-  
ման կարգով:

12. Իրացման ժամկետը

Փոխառության իրացումն սկսվում է մայիսի 15-ից  
քաղաքում և գյուղում միաժամանակ:

Փոխառության մասայական աշխատանքները տարվում են այնպիսի տեմպերով, վորպեսզի յերկու գեկադի ընթացքում ընդդրկվեն փոխառության բաժնե-գրության մեջ քաղաքներից և քաղաքատիպ վայրերի բոլոր բանվորները և ծառայողները և աշխատավորները, այն հաշվով, վորպեսզի միաժամանակ ցույց տալ լայն ոգնություն յինթաշեֆ դյուզերին և կուտնառություններին:

Բոլոր կոլտնտեսությունների ընդդրկումը բաժնեգրության և աշխատավոր մենատեսների ներդրակումը բաժնեգրության մեջ կատարվում է ամենակարծամանակամիջոցում, վորպիսին ասհմանված ե, յուրաքանչյուր շրջանի, մարզի, հանրապետության համար:

Բանվորները, ծառայողները, կոլտնտեսականները, կազմակերպված տնայնագործները, սովորողները և քաղաքի անկազմակերպ աշխատավոր բնակչությունը ձեռք և բերում փոխառության պարտատոմսերը, կոլեկտիվ բաժնեգրուման կարգով:

Պարտատոմսերի վճարումը կատարվում է մասնաւորման կարգով:

Բանվորների, ծառայողների, քաղաքի աշխատավորների այլ խմբերի համար, մասնաւորման ժամկետը սահմանված է սկսած 1933 թվի հունիսի մեկից, մինչև 1934 թվի ապրիլի մեկը: Բաժնեգրության դիմաց առաջին մուծումը վճարվում է 1933 թ. հունիսամյակի վեջանակի աշխատավարձից:

Կոլտնտեսականների բաժնեգրության մասնաւորման տևողությունը սահմանված և շրջործակոմների կողմից տեղերում, բայց 1934 թվի փետրվարի մեկից վոչ ուշ:

Աշխատավոր մենատեսեա դյուզացիները դնում են պարտատոմսերը կանխիկի վճարման կարգով: Աշխատավոր մենատեսները կարող են նույնպես պարտատոմսի հայտարարված դումարը վճարել մի քանի ժամերում: Բաժնորդների հետ փոխառության հաջ

վարկումները կատարվում են նրանց աշխատանքի վայրում: Փոխառության մուծումները բանվորների ծառայողների և աշխատավորների մյուս խմբերից, վորոնք աշխատավարձ են ստանում, պահպում են հավասար մասերով յուրաքանչյուր անդամ աշխատավարձը վճարելիս տվյալ բաժանորդի կողմից, աղմինսորացիային տվյալ հանձնաբարությունների հիման վրա:

Կոլտնտեսականները վճարում են իրենց բաժնեգրության մուծումները կանխիկի դրամով, գյուղատրհությունների լիազորներին:

Ամբողջ մուծումները կատարելուց հետո, բաժանորդըն ստանում է առձեռն այն մասի և արժողությամբ պարտատոմսեր, վորոնք հայտնված են բաժնեգրության ժամանակ:

Այնքան, վորքան, նոր փոխառությունների շահումների վիճակահանությունն սկսվում է ամբողջ մուծումների վերջանալուց հետո, առաջ պարտատմների համարների ամրացում բաժանորդներին, ինչպես արվում եր նախորդ փոխառությունների ժամանակ, չի կատարվելու:

Դրանով իսկ վերանում է նախորդ ամրացման կիրուններ տալու անհրաժեշտությունը «Յերկրորդ հընդամյակի փոխառություն» (առաջին տարվա բաժին) պարտատոմսերը տրվելու յեն բոլոր բաժանորդներին մինչ վիճակահանությունների սկիզբը:

13. «Յերկրորդ հնդամյակի փոխառություն» (առաջին տարվա բաժին) կամպանիայի անցկացումը, տարվում է յերկրի ներսում դասակարգացին որպատ պայքարի և միջազգային դիշատիչ կապիտալիստների կողմից դեպի ԽՍՀՄ-ի թշնամական և առելություն նոր սրտահայտությունների պայմաններում:

«Յերկրորդ հնդամյակի փոխառություն» հաջող անցկացմամբ, կտանք մահացու հարված դասակարգացին թշնամուն, ուժեղացնենք ԽՍՀՄ-ի տնտեսական անկախությունը և ամրապնդենք մեր յերկրի պաշտպանությունը:

Կոմունիստական կուսակցության գեղավարությամբ  
և անհաշտ պայքար մղելով՝ աջ ուղղարությունից դեմ՝  
վորակես գլխավոր վտանգի, պայքարելով «ձախ» խոտո-  
րումների և հակահեղափոխական տրոցիզմի դեմ՝ ան-  
խնա ջախճախելով ամեն տեսակի հակակուսակցական  
խմբորումները, կուստոմսը գրպանում բուրժուական  
այլասերվածներին—դասակարգային թշնամու գործա-  
կաններին վճռականապես մերկացնելու միջոցով՝ ձեռք  
են բերված վճռական հաջողություններ սոցիալիզմի կա-  
ռուցման և դասակարգային թշնամուն հաղթելու դոր-  
ծում։

Դասակարգային թշնամին ջախճախված է, թեպետ  
և չի վերացված։ և այդ յեղած և ներկայումս մեռնող  
դասակարգի մեաշորզները ցըլել են ամբողջ յերկրում  
և փորձում են տանել քայլույթը աշխատանք խորհրդա-  
յին իշխանության դեմ։

«Սյու նախկին մարդուկ, սողոսկել են մեր գործա-  
րանները, ֆարբիկանները, մեր հիմնարկությունները և  
առևտրական կարմակերպությունները, ջրային և յեր-  
կաթզծային տրանսպորտի ձեռնարկությունները և  
գլխավորապես կոլտնտեսությունները և խորհանտե-  
սությունները։ Սողոսկել են և անցել, թաղնվել, հադ-  
նելով «բանվորների» և «դյուղացիների» դիմակ, ըստ  
վորում նրանցից վոմանք անցել են նույնիսկ կուսակ-  
ցության մեջ» (Ստալին)։

Ջախճախված և ցրված դասակարգային թշնամին,  
փոխել է իր գերքը գործելով Խորհրդային իշխանու-  
թյան դեմ վնասարարության ճանապարհով (ТИХОЙ са-  
ՈՈЙ)։

Նա փորձում և ոգտագործել Խորհրդային իշխա-  
նության յուրաքանչյուր միջոցառումը, փորպեսզի վար  
կաբեկի և կշտամբի նրան և անցկացնի աշխատավորա-  
կան մասսաների մեջ, այդ միջոցառումների դեմ ուղ-  
ղված իրեն «լողունգները»։

Սյուպես որինակ դասակարգային թշնամին վորո-  
շում և դուրս գալ մեր փոխառությունների դեմ, վո-  
րոնք ոգտագում են բանվոր դասակարգի և կոլտնտեսա-

կան դյուղացիության մեծ վասահությունից և ազե-  
տացիա յի մղում փոխառությանը բաժանորդագրվելու  
դեմ։

Մեր թշնամիների այդ դասակարգային թշնամա-  
կան ագիտացիայի հայտնաբերումը, յուրաքանչյուր  
բանվորի և աշխատավորի առաջնակարգ խնդիրն է։

Դասակարգային թշնամու նկատմամբ հեղափոխա-  
կան աշարջությունն ուժեղացնելու, «Յերկրորդ հրն-  
ամյակի փոխառության» 100 տոկոսով բաժնեգրվելու  
միջոցով ապահովենք պրոլետարիատի դիկտատորան։  
Ե՛լ ամելի ծավալենք սոցիալիստական մրցությունը  
«Յերկրորդ հնդամյակի փոխառության» արագ և լրիվ  
տեղականացնեմ համար։

Տանը յերեք շաբաթված աշխատավարձը նոր փոխա-  
ռությանը։

«Յերերորդ ՀՆՊԱՄՑԱԿԻ ՓՈԽԱՌՈՒԽՑՑԱՆ»  
ԿԱՄՊԱՆԻԱՑԻ ԼՈԶՈՒՆԳՆԵՐԸ

1. Յերեք շաբաթված աշխատավարձը՝ «Յերկրորդ  
ՀՆՊԱՄՅԱԿԻ փոխառությանը» ապահովենք աշխատա-  
վորության լիովին մասնակցությունը փոխառության  
մեջ։

2. Յերեք շաբաթված յեկամուտը «Յերկրորդ հըն-  
դամյակի փոխառությանը»։

Վոչ մի կոլտնտեսական և կոլտնտեսուհի— փոխա-  
ռության բաժնեգրությունից զուրօ։

3. Աշխատավոր դյուղացիներ — մենատնտեսներ,  
յերեք շաբաթված յեկամուտը «Յերկրորդ հնդամյակի  
փոխառությանը», հավատարվեք կոլտնտեսականներին։

4. Բայլշեիկյան տեմպերով տեղավորենք «Յերկ-  
րորդ հնդամյակի փոխառությունը», ձեռք բերենք նոր  
հաղթանակներ— սոցիալիստական շինարարության  
ֆրոնտում։

5. Նոր փոխառության միջոցներով ապահովենք

1933 թվի յերկրորդ հնդամյակի առաջին տարվա ժողովական տնտեսության պլանի կատարումը:

6. Փոխառությունները—պրոլետարիատի փորձական գործիքն ե, սոցիալիզմի կառուցման գործում, իրեն սեփառկան պրոլետարական հաշվին, տեղակորենք «Յերկրորդ հնդամյակի փոխառությունը» լրիվ և ժամանակին:

7. Հարյուրավոր նոր գործարաններ, Փաբրիկաներ, իորհանտեսություններ և ՄՏԿ-ներ կառուցվել են առաջին հնդամյակի փոխառությունների միջոցներով. «Յերկրորդ հնդամյակի փոխառությամբ» ապահովենք սոցիալիստական հասարակակարգի կառուցումը ԽՍՀ Մուժունում:

8. Մասնակցելով «Յերկրորդ հնդամյակի փոխառությանը» ուժեղացնենք ԽՍՀՄ-ի տնտեսական անկախությունը, ամրացնենք մեր յերկրի պաշտպանումա-կությունը:

9. Մեր ուժը նրանումն ե, վոր մենք սոցիալիզմը կառուցուած ենք սեփական միջոցներով, առանց դրսի ճորտային վարկերի, «Յերկրորդ հնդամյակի փոխառությամբ»:

10. Տնտեսական ճգնաժամը քայլայեց կապիտալիստական յերկրների ֆինանսները: Մեզ մոտ ստեղծված ե պրոլետարական դիկտատուրայի ամուր բազա, «Յերկրորդ հնդամյակի փոխառության» միջոցները ԽՍՀՄ-ի ֆինանսական հզորության հետագա ուժեղացմանը:

11. Ծավալենք Փաբրիկաների, գործարանների, իորհանտեսությունների, ՄՏԿ-ների, կոլտնտեսությունների սոցիալիստական մրցությունը «Յերկրորդ հնդամյակի փոխառության» արագ և լրիվ տեղակորման համար:

12. Հարվածայիններ և հարվածայնուէիններ, յեղք առաջինը «Յերկրորդ հնդամյակի փոխառության» բաժնեգրության մեջ, կազմակերպեցնեք փոխառության տեղափորումը աշխատավորության մեջ:

13. Կոլտնտեսական գաշտերի հարվածայիններ և հարվածայնուէիններ յեղեք «Յերկրորդ հնդամյակի փոխառության» բաժնեգրվողների առաջին շարքերում, կազմակերպեցնեք փոխառության տեղակորումը դյուլում:

14. Ֆինանսները պրոլետարական դիկտատուրայի պայքարի զոր գենքն են կապիտալիստական տարրերի մասցը դների դեմ, «Յերկրորդ հնդամյակի փոխառությամբ» ամրացնենք ԽՍՀՄ-ի ֆինանսական հզորությունը:

15. «Յերկրորդ հնդամյակի փոխառությանը» լրիվ մասնակցելով ապահովեքնենք 1933 թվի կուլտուրական շինարարության տաներկու միլիարդանոց ծրագրի կատարումը:

Բ Ա Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Եջ

1. Առաջին հեգամյակը կառուցված է իր պրոլետա-  
րական հաշվով . . . . . 3
2. Տնտեսական նգնածամբ կործանեց կապիտալիս-  
տական յերկրների ֆինանսները, կատաստրոֆիկ  
կերպով վատրաքացրեց աշխատավորության  
ևյութական դրաւրյութը . . . . . 9
3. Ուր են զնացել ԽՍՀՄ փոխառություններից  
ստացված միջոցները . . . . . 13
4. «2-րդ հեգամյակի փոխառությունը» . . . . . 17

ՀՀ Ազգային գրադարան




NL0945886

- 30 -

1933 р. 264

492  
—  
2779



Գևահըտի տպարան

Գլուխի 8801

Գառվել 1156

Տեղայ 2000